



Ալեքսանդր Ճատուրյան

Սոխակին

Ուզում ես դու, սիրուն սոխա՛կ,
Տեսնել եղեմ ծաղկավառ,
Շնչել վարդի բույրն անուշակ
Թո՛ղ՝ դեպի հայ աշխարհ:

Ուզո՞ւմ ես դու հնչել անվախ
Երգող անկեղծ ու ազատ,
Երգել սիրո ժամեր խաղաղ
Թո՛ղ՝ դեպի Այրարատ:

Այնտեղ պայծա՛ռ, այնտեղ անո՛ւշ
Քեզ կըժպտի ճոխ գարուն.
Այնտեղ վարդի ծոցում քնքուշ
Դու կըգտնես սեր անհուն:

Այնտեղ երկինքն է կապուտակ,
Պայծառ արև ու աստղեր.
Այնտեղ ծիծաղ, ժլպիտ, բերկրանք.
Այնտեղ կյանքն է անվերջ սեր:

Թո՛ղ՝, սոխա՛կ, դու հարազատ
Երգիչ սիրո զգացման.
Թո՛ղ՝ բիրտ երկրում ագռավն ազատ

Հնչե սիրով յուր դադան...

1889, 20 մարտի

Մոսկվա